



14.ԱՎԱԳ ՓԱՐԼԵՎԱՆ

Կեղի չեղի՝ Ավագ փահլեվան մը կեղի:

Ավագ փահլեվան ինք չորս խատ էրեխսա, մեկ կնիկըմ կունենա: Շատ խեղճ վիճակի մեջ կեղի:

Են մեկ օր կասե. - Ես պիտի էլիմ էրթամ մըտ Աստված: Մինչև հերք ես էրեմլա խեղճ ապրիմ, տեսինք իմ հալ ի՞նչ կեղի:

Կելի կերպա. Կերպա ճամբու մեշտեխս. Կը տեսի օր մարթըմ եդ տեխ նստուկ ա:

Եդ մարթ կասա. - Ավագ փահլեվան, դու դո՞ր կերպաս:

Ավագ փահլեվան ասաց. - Ես կերպամ մըտ Աստված: Իմ էրեխսեք ես հըմլա խեղճ մացած, տեսիմ իմ էրեխսանցրու խըսմաք հորի՝ չի տա:

Եդ մարթ կասա. - Դառի գնա քո տուն, ուրբաթ օր հիրկուն, իրեկ ուրբաթ վերուրու, հիրկուն չուր լուս աղոթք էրա. ի՞նչ ուզես՝ Աստված քո խնդիրը կը կատարի:

Են տեխսեն կը դառնա, կուգա ուր տուն:

Կնիկ կասա. - Մարթ, դու դո՞ր գացիր:

Կասի. - Ես գացի, օր պիտի էրթայի մըտ Աստված, ճամբու վրեն ընծի մարթ մի ռաստ էկավ, ասաց. «Ավագ փահլեվան, դո՞ր կերպաս»: Ասի. «Կերպամ մըտ Աստված, իմ խտարեն չեղի. տեսինք Աստված իո՞րի էրեխսեներու զրզսի չի տա»: Են մարթ ինծի ասաց. «Գնա քո տուն. իրեկ օր ուրբաթի հիրկուն աղոթք էրա՝ ինչ օր ուզես Աստուց, Աստված քեզի կուտա»:

Կնիկն ասաց. - Մարթ, հեսօր օր ուրբաթ հիրկուն է, դու նեղեցեր ես, դու պառկե զոհարի, ես քո տեխ էսօր աղոթք կենեմ:

Կնիկն էլավ, գնաց տանիս. եղ կնկա միտքն էլ չար էր: Եղ քաղաքն էլ օր էղոնք նստուկ ին, թաքավորի նստած քաղաքն էր: Կնիկն աղոթք էրաց, Աստված աղաղակեց:

Ասաց. - Աստված, ընծի էն տեսակ մեկ խորոտկութեն մը տաս, օր թաքավորի տղեն լուսուն զա, զիս տեսի՝ խելքն էրթա, ընկի գետին ու զիս առնե:

Կնիկն աղաղակեց Աստծուն, Աստված կընկա խնդիրքը կատարեց: Մինչև օր լուսավ՝ կնիկ էն տեսակ մեկ խորոտ էլավ, օր լուսնկից դժհա խորոտ: Խըլուսուն թաքավորի տղեն էկավ ընցավ տանիսի Վրեն: Զկնիկն օր տեսավ՝ խելք գնաց, ընկավ գետին: Էլավ էն տեխեն, դաշցավ գնաց:

Ասաց. - Արո՛, ֆըլան տեխս կնիկըն կա. հա մըկա կերթաս էն կնիկ ընծի կը բերես, չէ՞ ես կը մեռնիմ:

Խեր գնաց, առավ զկնիկն, էկավ. բերեց ուր տղին:

Իրիկուն էր Ավագ փակիլեվան էկավ տուն, տեսավ օր էրեխեք կուլին: Ասաց էրեխաներուն. - Չեր մերն հու՞ր է:

Էն մեկ էրեխեն ջոջ էր, ասաց. - Արո, խըլուսուն մենք էլանք տեսանք, օր իմ մեր հըմալ խորոտկացեր էր, էղեր էր լուսնկի պես: Թաքավորի տղեն էկավ, առավ գնաց:

Ավագ փակիլեվան էնտեխս էլաց: Մանց չուրի ուրբարի հիրկուն: Էլավ կայնավ տանիս. աղոթք էրաց. Աստծուց խնդիրեց, ասաց. - Աստված, էն կնիկ էլի տել մի, ընկի թաքավորի տղի ջան՝ ծըժա:

Աստծու հրամանով կնիկն էլավ տել մի, ընկավ թաքավորի ջան՝ ծըժեց: Թաքավորի տղեն դոր փախավ՝ էլ կնկան ձեռնեն չպրծավ, ուր խոր ջուհաբ տվեց, ասեց. - Արո՛, էսա կնիկ էղեր տել մի, ընկեր իմ ջան, կը ծըժա. արի էս կընիկ տար ընճեն հեռոցուր:

Էկան կնիկ վերցին, տարան թալին ուր տուն:

Դիրկուն Ավագ փակիլեվան էկավ, տեսավ օր ուր կնիկ ուր տուն էր, տելու պես էր: Ուր ճժերու հապով ուր սիրտ մըօմըօաց: Ուրբար օր հիրկուն էլավ կայնավ, աղոթք էրաց ուր էրեխսեներու խաթրի համար:

Ասաց. - Աստված, իմ կնիկ էլի էղի իմ առաջի կնիկ:

Ասսու հրամանով կնիկն էլավ հառցին կնիկն, խեղդ էլավ ու էնտեխս մստավ:

Ավագ փակիլեվան ասաց. - Կնիկ, էլի գնա տուն, քու էրեխեք տիրա:

Էն խըլուսուն էլավ, ընկավ դուրս ու գնաց:

Գնաց մեկ քաղաք մի, դուրս էկավ էր քաղթի մեջ. քազիրկան մի դրեր էր: Քազրկան չիշխներ օր քաղաքեն դուրս հնկներ, էրթեր:

Գնաց բազրկնի մոտ, ասաց. - Բազրկան, դու հո՞րի չըս էլի երթա:

Բազրկան ասաց. - Մըր ճամխու վրեն ծիավորըմ փետա եղեր, ենոր հախուն չեմ իշխունա երթա:

Ավագ փահլեվան ասաց. - Ի՞նչ կուտաք ընծիկ, օր ես երթամ, էն փահլեվան հաղթեմ ու գամ:

Բազրկան ասաց. - Ի՞նչ քու լեզուն պըտտա, քեզի կուտամ:

Ավագ փահլեվան ասաց.- Քեզնե բան չիմ հուզեր. կուզեմ օր իմ քիսիք լիկ թութուն լըցեկ:

Քերեցին հոխեն երկու թութուն լըցին եղոր քիսիք, էլավ գնաց սարի գլուխ, տեսավ օր ծիավորըմ էն տեխեն էկավ: Թուր քաշեց ու գնաց ծիավորի հառեց: Խասնելու պես ծիավոր բռնեց, մըլեց գետին օր պիտի զվիզ կտրեր, տեսավ օր նը՝ ծիավոր, նը՝ մարթ, մեկ խատ մատնիկ գետին ա:

Մատնիկ վերուց, թալեց ճեր ու էկավ: Էկավ բազրկնին ասաց. - Էլի՛ գնա, ես են մարթ սպանեցի:

Բազրկան էլավ գնաց, օր իսկի մարթ չկա, ընդու գնաց:

Ավագ փահլեվան էլավ գնաց էն տեխեն: Գնաց ծովու մի ափան քաղաք: Տեսավ օր, էնքյան կյամին քոմած էդ ծովու վրեն, խըսապ չկա:

Ավագ փահլեվան ասաց. - Ես կյամիքն հո՞րին են քոմած, չըն երթա:

Ասեցին. - Ե՛, ենա պստիկ կյամին կը տեսի՞ս:

Ասաց. - Խա՛, կը տեսիմ:

Ասեցին. - Ենի կյամեսներու հառեցն առեր ա, ինչքան օր կյամիմ երթա՝ բարմիշ կենա, չըողնի ընցնին երթան:

Ավագ փահլեվան ասաց. - Ի՞նչ կուտաք ընծիկ, օր ես երթամ եդ կյամին հաղթեմ, դուք ընցիք, երթաք:

Ասեցին. - Ի՞նչ քո լեզուն պտոտկե աշխորքի մեջ՝ քեզի կուտանք:

Ավագ փահլեվան ասաց. - Զենն ես աշխորքի մալ չեմ ուզե. ծեզնե կուզիմ օր իմ քիսիք լիք թութուն լցիք:

Գացին երկու նուկի, երեք նուկի թութուն քերեցին, լցեց ուր քիսիք, գնաց:

Գնաց էլավ կյամու մեջ, տեսավ օր յոր գլխեն դեվ մի ու վիշապ մի կյամու մեջն են: Ավագ փահլեվան կյամու մեջ մտնելու խետ եղոնք էլան, զեղի ուտին:

Ավագ փահլեվան կանչեց՝ «Աստված», քաշեց զքուր օր պիտի զերկուսն էլ բրթեր, տեսավ օր բան չկեր կյամու մեջ՝ մեկ անկճի օդ, մեկ էլ օտաց խալխալ: Վերուց թալեց ուր ճերն, էկավ: Դեմ էկավ, էկավ ուր տուն:

Օր մի մնաց ուր տուն, են մեկել օր կնկան ասաց. - Կնիկ, իմ շորեր
կղտոտեր է, խանիմ՝ հետօր լվա:

Կնիկն ասաց. - Խան, լվամ:

Մոռոցավ զմատնիկն ու անկի օղն, խալխալն ճերեն չխանեց:

Կնիկ տարավ շորեր դրեց տաշտի մեջ, օր լվեր, ծեռ մըլեց ճեր,
աչքեց օր խալխալ մի, մատնիկ մի, անկիմ օր ճերն ա: Առավ էկավ Ավագ
փակիլեվանի մոտ:

Ասաց. - Ես քո շորեր չըմ լվա: Էսոնց տեր թըղ իգա քո շորեր լվա:

Են տեխտն Ավագ փակիլեվան գնաց ուր շորեր լվաց, փոեց, չորցուց,
խագավ, երկու օր մնաց ուր տուն: Վըր իրեք ավուր էլավ հընկավ
ճամբախ, գնաց: Չատ գնաց, քիչ գնաց՝ Աստված գիտա, են մեկ օր գնաց
սարիմ գլուխ, տեսավ օր քյոշկըն կա էր տեխ:

Ասաց. - Անորի եմ, երբամ էսա քյոշկ, հալրաթ էս քյոշկի մեջ մարք
կա, քիչ մը խաց ուտիմ, գիշեր մնամ էս տեխ, խըլսուն էկմ երբամ:

Գնաց խասավ քյոշկի դուռ, դուռ բացեց, մտավ ինե: Տեսավ օր մարք
չկա ինե: Աչքեց դես ու դեն, օր հըմեն բան էլ ինե պատրաստ է, տըլպավ
օր քիչ կերակուլ թերեր ուրին ուտեր, հանկարծակի դրնեն աչքեց օր իրեք
խատ են հըմալ էշխիա ծիավոր էկան, օր կրակ իրենց մոտեն կը թափի.
Քշեցին էկան քյոշկի դուռն իջան:

Ավագ փակիլեվան շուտ էլավ, տոլքի դուռ բացեց, մտավ տոլար,
ասեց. «Տեսնինք էսոնց մոտեն ի՞նչ կուգա դուրս»:

Եղոնք էկան, ծիանքներուց իջան, գացին ուրանց շորեր խանեցին
էլան իրեք խատ խրեղեն ախչիկ, էկան, նստան: Բերեցին կերակուլ պատ-
րաստեցին, գինին դրեցին օր պիտի խմեն:

Զոց քուր ըստաքան վերուց ձեռք, ասաց. - Քուրվըտիք, վի՞ր կենաց
պիտի խմեն: Եսի ես պիտի խմեն Ավագ փակիլեվանի կենաց:

Միջնեկ քուրն էլ վերուց ուր ըստաքան, ասաց. - Ես էլ կը խմեն էնոր
կենաց:

Պատիկ քուրն էլ վերուց ուր ըստաքան, ասաց. - Ես էլ պիտի խմեն
էնոր կենաց:

Ավագ փակիլեվան ասաց. - Իմ սրեն էկավ. էկիմ դուրս, տեսնինք էսոնք
ի՞նչ պիտի էնեն ընծիկ:

Էլնելու պես իրեքն էլ թերեցին ուրանց ըստաքաններ, դրեցին հառեց,
ասին. - Ղե դուռ էլ խմեն մեր կենաց:

Են էլ վերուց ջոջ քուրոջ ըստաքան, ասաց. - Եսի կը խմեն ջոջ քուր,
քո կենաց, - են մեկ ըստաքան խմեց:

Են միջնեկ քուրոջ ըստաքան էլ վերուց, են էլ խմեց էնոր կենաց:

Պատիկ քուրոջ ըստաքան էլ վերուց, ասաց. - Ես էլ կը խմեմ քո կենաց:

Իրերի ըստաքան էլ օր խմեց, փրցավ՝ ենտեխս մինչև լուս կերան ու խմին, ուրախություն էրին:

Զոջ քուրն ասաց. - Ավագ փահլեվան, ես մեկ օր զացի սարիմ' գլուխ, ծիավորըն էկավ իմ հառեց, ընծի հառեց, առավ իմ մատնիկ գնաց: Խոզի թե ես գիտե էն ո՞ն էր, բերեր էր իմ մատնիկ, ես գենի պիտ առի:

Ավագ փահլեվան ասաց. - Աշխարք շախ խոչաղ մարդ. ո՞ր գիտե ո՞ն է:

Են երկու քուրն էլ վերցին ասին. - Մենք ծովու վրեն կյանու մեճն ենք քաղաքըն խավխ երեր ենք՝ են քաղքեն էլ իսկի կյանի դուրս չէլեր: Են մեկ օր տեսանք օր մարթ մի գրուր քաշից մտավ կյանու մեջ, խասավ օր զերկսի գլուխն էլ կտրեր՝ մենք փախանք են կյանու մեջեն, իմ օտաց խալխալ ու իմ քուրոջ անկօթ օղ մնաց էնտեխս: Խավլ եղեր, օր մենք գետինք էնի ո՞ն էր. մեք երկուս էլ գենի պիտի առենք:

Միջնեկ քուր ասեց. - Ավագ փահլեվան, դու աշխարք շատ ես պտղտվեր, աճեալ էր մարթ դու չըս տեսե՞՞ր ես:

Ավագ փահլեվան ասաց. - Աշխարքի մեջ շատ մարթ կա, ես ի՞նչ գիտեմ, թե ո՞ն է:

Ավագ փահլեվան ձեռ մըլեց ճեպ, ճեպեն քիսիք խանեց, տվեց ջոց քուրոջ ծեռք, ասաց. - Առ, տես, իմ մատնիք խան, տեսիք իմ մատնիքն է՝ խորոտ, չէ՝ իմուն, օր հըմալըմ դու քու մատնըքի դեմ կընկիս:

Զոջ քուր քիսըքի բերան բացեց, աչքեց օր ուր մատնիքն, ուր քուրոջ խալխալն ու պատիկ քուրոջ անկօթ օղը մըջ քիսիքին է: Ու էլավ ընկավ Ավագ փահլեվանի վիզնվե բռնեց ու երեսներ պագեց:

Ասաց. - Քորվըտի՛ք, Աստված մեզի ուրախցուց, իրեքս էլ մեկտեխս մըջ մըր տուն ուրախցուց, - Ենտեխս հանեց քուրոջ խալխալն ու էն մեկել քուրոջ անկօթ օղը, տվեց ուրանցը:

Ասաց. - Քորվըտի՛ք, տեսեք մըր իրեքիս հաղթողն էլ մեկ մարթ ա:

Ենտեխս կերան ու խմեցին, ուրախություն էրեցին մինչև լուս: Լուսումութ էն երկու պատիկ քուր էլան գացին ջոց քուրոջն ասին. - Եսօր դուք մանցեք տուն, ձըր ուրախություն էրեք, կերպանք պղտտվելու:

Քուրվըտիք օր գացին էնոր մինչև կեսավուր ուրան ուրախություն էրին: Կեսօրին Ավագ փահլեվան աչքեց օր Սիվտակ դեվըմ մի էկավ, ընցավ գնաց:

Զոջ քուրոջն ասաց. - Եսա դեվ դո՞ր գնաց: Իլայի եսա դեվի տեղ դու ընծի պիտի ասեմ:

Զոջ քուր չասաց:

Վերուց են տեխեն վարոց մի, ընկավ վրեն՝ եմալ զջանդակ կապուտցուց, ինչ էրաց՝ ախօր չասաց:

Երկու քուր հիրիկուն դրսուց էկան, տեսան օր ուրանց քուր խիվանդ պառկուկ ա: Դիմցան օր ինչ դավի ա, էլ ծեն չերին: Մնացին խըլուսուն: Ոորուս միջնեկ քուր մնաց: Զոջ քուրն ու պստիկ քուր գացին:

Ավագ փակիլեվան տեսավ, կեսօրին էր Սիվտակ դեվը էմե էկավ, ընցավ գնաց:

Էկավ միջնեկ քուրոջ ասաց. - Երեկի տեսա՞ր ինչ խաղցի քու քուրոջ գլուխ, քո գլուխն էլ հըմալ կը խաղամ: Դե ասա:

Ինչ էրաց՝ չասաց: Վերուց վարոցն, էկավ դըխ միջնեկ քուր. Էնի քը զջոջ քուր դիա դեն էրաց:

Մնաց իրիկուն, էրկու քուրն էկան, տեսան օր ուրանց քուրն պառկուկ ա: Էնոնք էլ դավին հիմցան: Են խըլուսուն զոջ քուրն ու միջնեկ քուր գացին, պստիկ քուր մնաց:

Զուր կեսօրին կերան, խմեցին՝ ուրանց ուրախություն էրեցին: Ավագ փակիլեվան տեսավ օր Սիվտակ դեվն էմե էկավ, ընցավ գնաց:

Ասաց պստիկ քուրոջ. - Եսօր դեխ դոր է, ընծի ասա, թե չէ թեզի զջու քուրըտիք դեն կենեմ:

Պատիկ քուրն ասաց. - Ինչի՞ պիտի քընց գենոնք դեն էնես, օր դու խոչաղ մարթ ես՝ կո էնոր քոշկ էնա սարի գլուխն է, գընա տեսնիմ՝ դու իմալ մարթ ես:

Ավագ փակիլեվան էլավ՝ հերսոտ խեժավ ուր ծին, ընկավ ճամբախ, գնաց եդ սարի գլուխ: Տեսավ օր քոշկ ըմ կա եղտեխ: Դեմ քշեց գնաց քոշկի դուր իջավ: Զին կապեց քոշկի դուր, ինք մտավ ներս, տեսավ օր խուրնիկ-խրեղեն ախչիկ ըմ էրա տեխն նստուկ ա:

Ախչիկն ասաց. - Ախ, տղա, դու իմա՞լ էկար հընկար եսա տեխ: Մըկա Սիվտակ դեվ օր հիմցավ՝ թեզի փարալամիշ կենա: Դու ակսոս չե՞ս, դարցի շուտով գնա, քանի օր էնի քնուկ ա:

Ավագ փակիլեվան ասաց. - Ախչի, ես դ՞ո՞ր կերթամ, ես էնոր հապով էկեր եմ, օր էնոր գլուխ կտրեմ: Շուտ խանչա գա էնոր:

Ախչիկն ասաց. - Էնի քնուկ ա, էնի մըկա չիմնա. չուր երկարմ' չտաքցուս, տանիս դնիս էնորը վզի վլեն:

Ավագ փակիլեվան աջքեց դես ու դեն՝ խաչըկաթ գտավ: Տարավ մըլեց կրակ, սերսուր մը կարմրոցուց ու թերեց տարավ դրեց դեվի վզի վլեն:

Դեվն հիմցավ, ծըմըոտըկաց: Ասաց. - Այս, Կնիկ, դու եսօր հո՞րի իմ տեխս սերսուր չավլեր ես, սըրբեր ես, լվեր չեն բողեր ես դադարիմ:

Կնիկն ասեց. - Դեվ, եի վեր, քո գրողն էկեր քո խոգին կառի:

Դեվն ասաց. - Կնիկ, գնա դեն, ելա՝ բռնիմ քեզի, քո օտ ու գլուխ կը ջարդեմ, վեր արուն խողի երես. իմ խոգի առնող էլ պիտի է՞՞ոյ:

Ավագ փահլեվան ծեն լսելու պես խանչեց Աստված, գթուր քաշեց, եկագ դժև դեվ, խըտ զարկելուն, դեվի գլուխ փրցավ. գնաց:

Ասեց.- Դու ո՞՞ն ես, մեկ էլ զարկ:

Ավագ փահլեվան ասաց. - Ես իմ մորեն մեկ եմ եղեր, իմ դրբն էլ մեկ ա: Ի՞նչ մարք էիի, որ իմ երկու դրբին դիմանան:

Են տեխս դեվ խուրրան երաց ջաղամաթին:

Վերուց գրեվի կնիկ, առավ դեվի ունեցած մալ, բերեց իրեք քրոջ վլեն: Վերցուց զիրեք քուվորն էլ, բերեց տարավ ուր տուն:

Ենոնք խասան ուրանց մուրազին, դուք էլ խասնիք ծեր մուրազին:

Ասսուց իջան իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ էլ քովի ջաղամաթին:

